# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկ 8/1
☎ (253) 2-41-00, E-mail: alaverdi.lori@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

**22 ՀՈՒՆԻՍԻ 2023 ԹՎԱԿԱՆ, N 62-Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ կետով և հաշվի առնելով Ալավերդի համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման 2024 թվականի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Առաջարկել համայնքի ղեկավարին օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում հաստատված ծրագիրը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարան՝ Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարություն ներկայացնելու և պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր պետական մարմնի միջոցով 2024 թվականի պետական բյուջեի նախագծում ընդգրկելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց.

Կողմ (25) Դեմ (0) Ձեռնպահ (0)

Ա. Թամազյան

Տ. Պապոյան

Ն. Թորոսյան

Ա. Թամազյան

Ա. Բադալյան
Ա. Տիտանյան
Գ. Ալլահվերդյան
Մ. Ռամազյան
Թ. Վարոսյան
Ս. Չերչինյան
Լ. Մելիքսեթյան
Ա. Ռամազյան
Ա. Դավթյան
Դ. Ղումաշյան
Լ. Սարգսյան
Հ. Ձավարյան
Ֆ. Թաթուխաշվիլի
Ա. Սմբատյան
Ա. Դալլաքյան
Ա. Ջանինյան
Հ. Ղուլյան
Ա. Երիցյան
Հ. Հախվերդյան
Մ. Մարգարյան
Ա. Գևորգյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱԶՅԱՆ

**2023թ., հունիսի 22,**
**Լոռու մարզ, ք. Ալավերդի**